ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՂԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՄԻՇՅԱՆ

Հետխորհրդային Հայաստանը անցել է հասարակական, քաղաքական և տնտեսական լուրջ ցնցումների միջով, որոնց ազդեցությունը շոշափելի է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Թեպետ այսօր Հայաստանում հաստատված են ժողովրդավարական և լիբերալ տնտեսական ինստիտուտները, սակայն հստակ նկատելի է դրանց լեգիտիմության և հասարակական չեզոքության պակաս[1]: Հասարակական գործընթացների կարգավորման և վերահսկողության ձևական միջոցների թերիության պատճառով ձևավորվել են ոչ ձևական մեխանիզմներ, որոնք դրսևորվում են սոցիալական կապիտալի արժևորմամբ, միգրացիոն ցանցերի ձևավորմամբ[2], անձնային/ներանձնային, խմբային և ինստիտուցիոնալ լարվածությամբ՝ հանգեցնելով լեգիտիմության և ինքնության ճգնաժամերի[3]:

Այսօր խնդիրները հատկապես սուր են դրսևորվում գյուղական համայնքներում. գյուղը և գյուղական կենսակերպը դադարել են գրավիչ լինելուց՝ նպաստելով գյուղաբնակների՝ իրենց բնակավայրի հետ կապերի թուլացմանը, գյուղական ինքնության ճգնաժամին[4]: ԽՍՀՄ փլուզումն ու հետխորհրդային շրջանում ժողովրդավարական և ազատական գաղափարախոսությունների «ներմուծումը», հասարակական և քաղաքական արմատական վերափոխումներին զուգընթաց, փոփոխեցին նաև հայաստանյան գյուղական կենսակերպը, տեղի ինքնություններն ու տեղական

---

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-5D021 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

[1] Տե՛ս **Ա. Մկրտիչյան, Հ. Վերմիշյան, Ս. Բալասանյան,** Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդների շրջանում, Հայաստան - 2016, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Եր., 2016:

[2] Տե՛ս **Ա. Ե. Մկրտիչյան, Գ. Ն. Շահնազարյան, Ա. Կ. Սահակյան, Ա. Ռ. Վարտիկյան, Հ. Ռ. Վերմիշյան,** Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում, Եր., 2013:

[3] Տե՛ս **Habermas J.,** Legitimation Crisis// Boston: Beacon Press, 1975:

[4] Տե՛ս **Ա. Ե. Մկրտիչյան, Գ. Ն. Շահնազարյան, Ա. Կ. Սահակյան, Ա. Ռ. Վարտիկյան, Հ. Ռ. Վերմիշյան,** նշվ. աշխ., **Ա. Մկրտչյան,** Գյուղացիական ինքնության հիմնախնդիրը միգրացիայի համատեքստում // «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», № 2 (20), 2016, էջ 28-35:

կառավարման համակարգերը: Հետխորհրդային Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման գյուղական համայնքների սոցիալական հիմնախնդիրների հաղթահարմանն ուղղված սոցիալական ծրագրերը և ռեֆորմները ձևավորեցին նոր գեոմշակութային իրավիճակ[5]՝ կտրուկ փոխելով գյուղի սոցիալական տարածությունը: Հողօգտագործման, ընտանիքի բարեկեցության, միգրացիայի, բնօրրանին կապվածության և քաղաքային կյանքով գայթակղվածության հիմնախնդիրները շարունակում են արդիական մնալ մինչ այսօր[6]:

Գյուղաբնակների՝ բնակավայրին կապվածության և ինքնության խնդիրների ուսումնասիրությունն այսօր առավել քան հրատապ է: Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ մշակելու և գործարկելու քաղաքականությունը[7] նույնպես օբյեկտիվորեն ազդում է սոցիալ-տնտեսական և վարչական-քաղաքական գործընթացների վրա[8]՝ չհաշված սուբյեկտիվ, ոչ ձևական կառուցվածքների ազդեցության և փոփոխման ռիսկերը՝ որպես տարածքային պլանավորման և կառավարման համակարգին ռեֆլեքսիվ գործոններ: Որպես ասվածի մասնավոր դրսևորում կարելի է նշել համայնքների խոշորացման քաղաքականության նկատմամբ Հայաստանի գյուղական համայնքների դժգոհությունը:

Եթե այսօր գյուղական համայնքների սոցիալական կառուցվածքի փոփոխություններն ու ժողովրդագրական հիմնախնդիրները որոշ չափով ուսումնասիրված են[9], ապա գյուղաբնակների տեղի ինքնության և տեղի հետ կապվածության հարցերը քննության կարոտ են: Տեղի ինքնությունը որպես տարածական պայմանավորվածություն ունեցող երևույթ դիտարկելը այսօր տարածում է գտել համայնքների սոցիալական հիմնախնդիրները ուսումնասիրողների շրջանում: Համաձայն արդի սոցիոլոգիական մոտեցումների՝ տեղի ինքնությունն ունի սոցիալական բնորոշիչներ և ռեֆլեքսիվ է սոցիալական տարածության նկատմամբ[10]: Տեղայնությունը ուղղակիորեն վերաբերում է ֆիզիկա-

---

[5] Տե՛ս **Wallerstein I.,** The Modern World-System as a Capitalist World-Economy// «The globalization reader» edited by Lechner F. J., Boli J., third edition, Library of Congress Cataloging-in-Publication Data: Blackwell Publishing, 2008, էջ 51-56:

[6] Տե՛ս **Ա. Մկրտիչյան, Հ. Վերմիշյան, Ս. Բալասանյան,** նշվ. աշխ., էջ 115-121:

[7] Տե՛ս «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», Եր., 2011, էջ 10-11, «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ», Եր., 2012, էջ 6:

[8] Տե՛ս **Ա. Դանիելյան,** Համայնքների խոշորացման ծրագրի էությունը և նպատակահարմարությունը // http://www.acoya.org/քաղաքականություն-hy/համայնքների-խոշորացման-ծրագրի-էությ/, [Դիտում՝ 19.09.2016]:

[9] Տե՛ս **Մ. Գաբրիելյան,** Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն)// Եր., 2001, **Ա. Ե. Մկրտիչյան, Գ. Ն. Շահնազարյան, Ա. Կ. Սահակյան, Ա. Ռ. Վարտիկյան, Հ. Ռ. Վերմիշյան,** նշվ. աշխ., **Вермишян А.** Измененные формы взаимоотношений в современном армянском селе // «Социология и право», № 1 (18), СПб., 2013, էջ 22-27:

[10] Տե՛ս **Hague K., Jenkins P.,** Place Identity, Participation and Planning, London: Routledge, 2005:

կան տարածությանը և գյուղական կյանքի տարածական խնդիրներին: Չնայած բնակավայրին կապվածության հիմնախնդիրներն արտահայտվում են գյուղաբնակների առօրյա մեկնաբանություններում, սակայն դրանք չեն սահմանափակվում միայն գյուղի ֆիզիկական տարածությամբ: Այն շատ ավելի ընդգրկուն է, ներառում է սոցիալ-քաղաքական գործընթացների ողջ սպեկտրը՝ ազդվելով հատկապես միգրացիոն գործընթացներում արտահանվող և ներկրվող ինքնություններից:

Տեղի ինքնության, տեղի հետ կապվածության հիմնախնդիրը նշանակալի դեր ունի համայնքների կենսագործունեության, տարածքային պլանավորման և կառավարման մոդելների, աղքատության հաղթահարման մեխանիզմների ուսումնասիրություններում՝ տեղի ինքնությունը դիտարկելով որպես համայնքային մասնակցության, տեղական կառավարման արդյունավետությունը պայմանավորող և դրանից բխող երևույթ: Արդի հետազոտություններում հաճախ շեշտադրվում են սույն խնդրի ոչ միայն սոցիոլոգիական, այլ նաև սոցիալ-հոգեբանական և մարդաբանական ասպեկտները[11]: Տեղի ինքնությանը, տեղի հետ կապվածությանը նվիրված միջգիտակարգային ուսումնասիրությունների համատեքստում բացահայտվել են ՀՀ երիտասարդ գյուղաբնակների ընկալումները գյուղական կենսակերպի վերաբերյալ՝ գյուղը դիտարկելով հող-համայնք-ընտանիք հարաբերությունների համատեքստում[12]: Ընդ որում, գյուղը դիտարկվել է ոչ միայն որպես տեղ-բնակավայր, այլև *իմաստների, գործունեության և յուրատիպ լանդշաֆտի* սոցիալական համադրված միջավայր[13]:

Հետազոտական խնդիրները լուծելու նպատակով իրականացվել են՝

1. միգրացիայի բարձր ցուցանիշ ունեցող համայնքներում 2013 թվականին կատարված որակական հետազոտության (խորին հարցազրույց (ԽՀ) գյուղաբնակների հետ) արդյունքների երկրորդային վերլուծություն,
2. 2016 թվականին ութ ֆոկուս խմբային հարցազրույցներ (ՖԽ) ՀՀ գյուղաբնակ երիտասարդների շրջանում[14]:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ հնարավոր է դարձել վեր հանել ՀՀ գյուղական համայնքներում տեղի ինքնության, սոցիալական տարածության կառուցվածքների և փոփոխվող սոցիալական պրակտիկաների դինամիկ հարաբերությունները:

ՀՀ գյուղաբնակ երիտասարդների ընկալումներում գյուղի հավաքական կերպարը կառուցված է քաղաքի հետ անմիջական հակա-

---

[11] Տե՛ս **Kay R., Shubin S. and Thelen T.,** Rural realities in the post-socialist space, «Introduction. Journal of Rural Studies», vol 28, № 2, Elsevier, Amsterdam, 2012, էջ 55-62:

[12] Տե՛ս **Հ. Վերմիշյան,** Գյուղը և ազգային ինքնությունը սոցիալական փոփոխությունների հեռանկարում // «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», № 137.5, էջ 7-8:

[13] Տե՛ս **Relph E.,** Modernity and the reclamation of place, «Dwelling, Seeing and Designing: Towards a phenomenological ecology», New York: State University of New York Press, 1992, **Hague K., Jenkins P.,** նշվ. աշխ., էջ 3:

[14] Ֆոկուս խմբերը կազմակերպվել են ՀՀ 4 մարզերում, ֆոկուս խմբերի ձևավորման չափանիշներն են հարցվողների սեռը և տարիքը՝ 14-20 / 21-29 տարեկան:

դրության շրջանակներում: Մասնավորապես, մատնանշելով գյուղը բնութագրող դրական հատկանիշները՝ գյուղաբնակ երիտասարդները ընդգծել են *գյուղի էկոլոգիական միջավայրն* ու *գյուղաբնակի որակական հատկանիշները*՝ այն հակադրելով քաղաքին և քաղաքաբնակին:

1. Էկոլոգիական միջավայրի տիպիկ բնութագիրը գյուղաբնակների ներկայացումներում՝

«Օդը մեր մոտ ավելի մաքուր ա, քան քաղաքում: … Լավը էն ա, որ հնարավորություն ունենք մաքուր սնունդ օգտագործելու, մշակում ենք, ավելի քիչ ենք քիմիա ուտում» *(ՖԽ, իգական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

2. Գյուղաբնակ երիտասարդի տիպիկ բնութագիրը գյուղաբնակների ներկայացումներում՝

«Գյուղի ջահելները կաթը, մածունը կերած, ձիգ, ուղեղով տղեք են [ծիծաղում են], դրա համար չեմ ուզում, որ քաղաք ապրեմ, որ իմ երեխեն ուրիշ ձև մեծանա, գիտեմ, որ գյուղում մեծանա, իմ ուզած ձևա մեծանալու, որ լպիրշ չլինի, մարդը էստեղ ավելի շնորքով ա մեծանում, քան քաղաքում» *(ՖԽ, արական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

Նման բնութագրիչների ընդհանրացմամբ նկատում ենք, որ գյուղաբնակի ինքնությունը կառուցված է քաղաքից տարբերակման համատեքստում, իսկ ինքնության միջուկը կառուցված է զգայական բնութագրիչների վրա: Առավել նյութական և շոշափելի բնութագրիչներ բացահայտվում են, երբ գյուղաբնակ երիտասարդները նկարագրում են գյուղի՝ որպես բնակավայրի և գյուղի՝ որպես կենսակերպի թերությունները: Այստեղ նկատվում է անցում գյուղի՝ որպես վերացական-զգայական երևույթից դեպի առօրյա-կենցաղային պրակտիկաների մակարդակ: Անդրադառնալով գյուղական առօրյային, իրական փոխհարաբերություններին՝ գյուղի նկարագրությունը կառուցվում է բացասական բնութագրիչներով: Ստացված արդյունքների ընդհանրացմամբ դուրս են բերվել գյուղի բնութագրական երեք հիմնական թերությունները, որոնք գյուղաբնակ երիտասարդները մատնանշում են՝ որպես հիմնական գործոն գյուղին թույլ կապվածության և գյուղը լքելու հակումների համատեքստում: Դրանք են.

1. թերզարգացած սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքները,

2. մարզական հարմարությունների պակասը,

3. ժամանցի կազմակերպման ենթակառուցվածքների բացակայությունը:

«Սովորելու կամ սպորտով զբաղվելու ցանկություն շատերն ունեն, բայց չկան էդ հնարավորությունները: Շրջագայություններ, հեռուստատեսային ալիքներ, ինտերնետ՝ բոլորն են ուզում ունենալ, բայց չկան այդ հնարավորությունները: … Մի եկեղեցի լիներ, լավ կլիներ: Հիմնականում երիտասարդության զբաղվածության խնդիրն է: Բացի իրենց տան գործերից, ոչ մի բանով չեն զբաղվում: Ժամանցի վայր չունենք: Գոնե երեխաների համար սպորտի դահլիճ լիներ կամ մի կինոթատրոն» *(ՖԽ, արական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

«Զահելության զբաղմունքը շաշկին, նարդին ա, ուրիշ ի՞նչ անես գյուղում» *(ՖԽ, արական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

«Մեր մոտ կա տրանսպորտի հետ կապված խնդիր: … Գյուղում զբաղմունքներ քիչ կան, գնում ենք մոտակա քաղաք: Երիտասարդները շատ չեն գտնվում գյուղում: Գնում ենք քաղաք, երեկոյան 8-ին, 9-ին վերադառնում ենք գյուղ» *(ՖԽ, արական սեռի 14-20 տարեկան ներկայացուցիչներ):*

Գյուղը զգայական մակարդակում ընկալվում է որպես ինքնանույնականացման սիմվոլիկ բաղադրիչ՝ հատկապես քաղաքի հետ հակադրության համատեքստում, սակայն իրական գործունեության համատեքստում դիտարկվում է որպես երիտասարդին «անհարմար» սոցիալական տարածություն, ուր հնարավոր չէ անհատի ինքնաիրացումը: Դա հատկապես նկատելի է գյուղական կենսակերպի և գյուղատնտեսական գործունեության հետ երիտասարդների ինքնանույնականացման խնդիրների քննարկման մակարդակում:

Բազմիցս նկատել ենք[15], որ, փաստորեն, գյուղի՝ որպես ուրույն սոցիալական համակարգի ինքնավերարտադրության գործընթացում *հողը* ամենանշանակալի և շոշափելի կապիտալն է: Առաջնային է հողի տնտեսական նշանակությունը, սակայն ոչ պակաս կարևոր է դրա սոցիալ-մշակութային, սիմվոլիկ արժեքը: Հողի հետ հարաբերակցության մեջ է բացահայտվում գյուղական ընտանիքի, համայնական կենսակերպի, առօրյա մշակույթի ու դերաստատուսային բաշխվածության բնույթն ու բովանդակությունը: Արհեստական կամ ոչ բնական միջամտությունների բացառմամբ գյուղի՝ որպես ավանդական-համայնական արժեքներ վերարտադրող մեխանիզմի պահպանման սակավ հնարավորություններից մեկը ավանդական գյուղական կենսակերպի՝ որպես օբյեկտիվորեն սոցիալական կապեր վերարտադրող մեխանիզմի ապահովումն է: Այս տեսանկյունից գյուղացի (գյուղական ընտանիք) գյուղ (համայնք) փոխհարաբերությունների ամրապնդումը հնարավոր է «գյուղացի-հող» օբյեկտիվ և սիմվոլիկ փոխհարաբերության ամրապնդման ճանապարհով, սակայն հետազոտության արդյունքները այլ պատկեր են վեր հանում, մասնավորապես.

«Մարդիկ **հույսները կտրել են հողից**», և այսօր գյուղում «հարգվածը նա է, ով հարուստ է: Երեխաներն էլ են դա հասկանում, դրա համար էլ մանկուց բոլորը ձգտում են գնալ արտերկիր, օրինակ՝ Ռուսաստան, որպեսզի հարուստ լինեն» *(ԽՀ, արական, 28):*

«Ծննդավայրը սիրում ենք, պիտի սիրենք, պարտադիր է, մենակ գյուղի **տանջանքը** չենք սիրում» *(ՖԽ, իգական սեռի 14-20 տարեկան ներկայացուցիչներ):*

«Բավականին շատ **տանջանք կա** գյուղատնտեսության մեջ … **տանջանքը** դաշտում է, հողի հետ» *(ՖԽ, իգական սեռի 14-20 տարեկան ներկայացուցիչներ):*

---

[15] Տե՛ս **Հ. Վերմիշյան,** նշվ. աշխ., էջ 3-9, **Вермишян А.,** նշվ. աշխ., էջ 22-27, **Vermishyan H.** Local Manifestation of Transnationality in Current Armenian (RA) Village Communities. «Armenians around the World: Migration and Transnationality», Peter Lang, 2015, էջ 73.

«Եթե սենց շարունակվի, *հեռանկար չկա էստեղ:* Ասեմ, եթե կարտոֆիլ ենք մշակում, պարարտանյութ ենք առնում, սալյարկա, վերջում, որ հաշվում ենք, մեզ մնում ա միայն **չարչարանքը**: Ուղղակի հող մշակելով՝ մենակ գոյատևում ես» *(ՖԽ, արական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

«Մեծահասակները չեն սիրում բնակավայրը փոխել, զբաղվում են գյուղատնտեսությամբ: Զուտ մտածելակերպով, որ իրանք կգնան ու տանը կնստեն: Գյուղատնտեսությամբ զբաղվելը, որ տարածված ա անասնապահություն, հողագործություն, շատ երիտասարդներ հրաժարվում են դրանից: **Օրինակ՝ իմ ամուսինը ասում ա՝ ինչ անեք չանեք, չեմ անի, ո՛չ հողի գործ կանեմ, ո՛չ էլ անասուն կպահեմ**» *(ՖԽ, իգական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

Ինչպես երևում է գյուղաբնակ երիտասարդների մեկնաբանություններից, գյուղական կենսակերպի ներկայացման հիմնական կողը/բնորոշիչը **«տանջանքը / չարչարանքն»** է: Նկատելի է սոցիալական և իմաստային նշանակալի հեռավորություն գյուղաբնակի և գյուղական կենսակերպի տարրերի միջև: Հողի դերի և նշանակության սիմվոլիկ արժեզրկման պայմաններում նկատելի են գյուղական ընտանիքի, համայնական կենսակերպի, առօրյա մշակույթի ու դերաստատուսային բաշխվածության բնույթի ու բովանդակության փոփոխություն: Այսօր գյուղաբնակ երիտասարդների կողմից որպես ավանդական գյուղական կենսակերպի վերարտադրության հիմնարար միջավայր ընդգծվում է միայն ընտանիքը[16]: Ընտանիքը ներկայանում է որպես հավաքական սուբյեկտ՝ հանգեցնելով գյուղաբնակների ներփակման և տարբերակման մեխանիզմների ձևավորմանը[17]: Հողից սիմվոլիկ և համապատասխանաբար նյութական օտարման պայմաններում առաջանում է կենսական պահանջմունքների բավարարման այլընտրանքային միջոցների, այլընտրանքային աշխատատեղերի կարիք, որոնց ապահովումը ՀՀ արդի գյուղերում բավականին բարդ և դեռևս չլուծված խնդիր է: Այդ տեսանկյունից, եթե գյուղաբնակ երիտասարդները գյուղական կյանքը բնութագրում են թույլ ենթակառուցվածքներով, ապա կենսագործունեության տեսանկյունից հիմնական քննարկումը վերաբերում է սոցիալ-տնտեսական վատ պայմաններին և աշխատատեղերի բացակայությանը:

«Վատն այն է, որ այսօր կան մարդիկ, որ գնացել են, սովորել են ու դիպլոմը տանը դրված է, ու ինքը բանվորություն է անում: *Հիմնականում աշխատատեղերի հարցն է: Դա արտագաղթի հիմնական պատճառն է» (ՖԽ, արական սեռի 14-20 տարեկան ներկայացուցիչներ):*

«Հիմնական արտագաղթի պատճառը աշխատատեղերն են, ու եթե հայերը մնային Հայաստանում, թեկուզ հայտնի հայերը, ճարտարապետները մնային Հայաստանում, ամեն սարքածները լիներ Հայաստա-

---

[16] Տե՛ս **Vermishyan H.,** նշվ. աշխ., էջ 74-75:

[17] Վերարտադրության ընտանեկան մոդելի մասին տե՛ս **Бурдье П.** Социология социального пространства. СПб., 2007, էջ 109-114:

նում, տնտեսությունը զարգացած կլիներ, ավելի գեղեցիկ շինություններ կունենայինք» *(ՖԽ, իգական սեռի 14-20 տարեկան ներկայացուցիչներ):*

«Ես Երևանում կապրեի, քանի որ այնտեղ աշխատանք կա: Եթե հնարավոր լիներ աշխատատեղի հարցը լուծել, գյուղում կմնայի» *(ՖԽ, արական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

Ինչպես նկատում ենք երիտասարդների մեկնաբանություններից, որպես խնդրի կարգավորման ***միակ մեխանիզմ*** ընդգծվում է ***արտագաղթը:*** Այս ամենից պարզ է դառնում, որ այսօր արտագաղթը դարձել է հետխորհրդային Հայաստանի գյուղական կյանքի վերարտադրության տեղական օրինաչափություն՝ հանգեցնելով այլընտրանքային (վերազգային) «լոկալությունների» ձևավորմանը[18]: Նման գործընթացները դրսևորվում են գյուղաբնակ երիտասարդների մեկնաբանություններում՝ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների համատեքստում լեգիտիմացնելով արտագաղթն ու գիտակցության մեջ ամրագրելով աշխատանքային միգրացիան՝ որպես կյանքի սցենար:

- *Արտագաղթի սոցիալ-տնտեսական լեգիտիմացում*

«Արտագաղթի հիմնական պատճառը սոցիալական անապահովությունն ա: *Չեմ կարողանում աշխատանք գտնեմ*, փող տուն բերեմ, գնամ, աշխատանք գտնեմ Ռուսաստանում, կամ ուրիշ երկրում փող կաշխատեմ, որ իմ ընտանիքը կարողանա ապրի. դրա համար արտագաղթ ա լինում» *(ՖԽ, իգական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

- *Աշխատանքային արտագաղթը՝ որպես կյանքի սցենար*

«Ինչի սովորենք, եթե վերջում խոպան ենք գնալու: Օրինակ՝ իմ ախպերը սովորում ա գիտելիք ստանալու համար: Օրինակ՝ ես մարդ գիտեմ, ինքը սովորում ա, հետո տարեկետում ա վերցնում ծառայելու համար, վերջացնում ա բանակը ու գնում ա խոպան» *(ՖԽ, արական սեռի 21-29 տարեկան ներկայացուցիչներ):*

Ընդհանրացնելով կարող ենք նկատել, որ ՀՀ գյուղաբնակ երիտասարդների ընկալումներում դիտարկելի է տեղի հետ զուտ զգայական, սիմվոլիկ նույնականացում, ինչը ենթադրում է բնակավայրին պատկանելության բարձր, սակայն կապվածության ցածր մակարդակ[19]: Գոյություն ունի գյուղական կյանքի ընկալման էմոցիոնալ և մոտիվացիոն հիմքերի անհամապատասխանություն: Այդ տեսանկյունից առկա է երևակայական կապ բնակավայրի հետ, սակայն փորձարարական մակարդակում դիտարկելի է կառուցվածքային անբավարարվածություն: Որպես հետևանք, գյուղաբնակ երիտասարդների կենսական պլաններ-

---

[18] Տե՛ս **Vermishyan H.,** նշվ. աշխ., էջ 74-75:

[19] Տվյալ դեպքում տեղի հետ կապվածությունը սահմանում ենք որպես միջավայրի հետ իրական և հուզական կապ, որը բավարարում է հիմնարար մարդկային կարիքները (տե՛ս **Relph E.,** Place and placelessness. London: Pion Limited, 1976): Մեր դեպքում, թեև գյուղաբնակ երիտասարդները սիմվոլիկ մակարդակում կապված են գյուղի հետ, սակայն նրանք միանշանակ գիտակցում են, որ գյուղը չի կարող բավարարել իրենց հիմնարար մարդկային պահանջմունքները:

ը կապվում են «այլընտրանքային» տարածությունների հետ՝ հարցականի տակ դնելով գյուղական կյանքի սոցիալական վերարտադրության հնարավորությունները:

Բանալի բառեր – *տեղի ինքնություն, տեղի հետ կապվածություն, գյուղական համայնք, սոցիալական տարածություն, տարածության կառուցվածք, սոցիալական պրակտիկա*

АРУТЮН ВЕРМИШЯН – ***Молодёжь, местная идентичность и структуры социального пространства сельских общин в постсоветской Армении.*** **–** Фундаментальные социальные и политические преобразования после распада Советского Союза привели к изменению сельского образа жизни, сельской идентичности и системы самоуправления. Реформа, направленная на развитие системы самоуправления, и программы, призванные преодолеть социальные проблемы на селе, сформировали новую ситуацию. Проблемы, связанные с землепользованием, благосостоянием семьи, миграцией и привлекательностью урбанистического стиля жизни, актуальны до настоящего времени, особенно среди молодёжи. В статье через восприятие молодёжью сельского образа жизни выявляются изменения в местной идентичности и уровне привязанности к месту. С опорой на вторичный анализ исследовательских данных, углублённые опросы сельских жителей и дискуссии в фокус-группах рассмотрена динамическая взаимосвязь местной идентичности, структуры социального пространства и изменённых социальных практик в сельских общинах Армении.

Ключевые слова: *местная идентичность, привязанность к месту, сельская община, социальное пространство, структура пространства, социальная практика*

HARUTYUN VERMISHYAN – ***Youth, Place Identities and Social Space Structures in Post-Soviet Armenian Rural Communities.*** – After the collapse of the Soviet Union and the "importation" of democratic and liberal ideologies in line with fundamental social and political transformations led to the change in the discourse on the Armenian rural lifestyle, in the place identities and in self-governing systems. Reform, directed to the development of self-government system in the Post-Soviet Armenia, the social programs meaning to overcome the social issues of the Armenian rural communities, formed a new geopolitical situation, that simultaneously tremendously changing local realities of rurality. Social problems linked to land use, family welfare, migration, place attachment and attraction with urban lifestyles have been actual up to present day, especially among the young people. Observation of place identity as a locally and spatially conditioned phenomenon is common presently in the study of social issues of local communities. According to contemporary sociological approaches, place identity has social prefixes and is reflexive towards social space. The aim of the research is to reveal the changes in place identity and place attachment features within the Armenian rural communities through examination of youth's perceptions around the rural lifestyle. Relying on secondary analysis of the research data, in-depth interviews among villagers and focus group discussions (8 FGD among village youth) the paper discusses the dynamic interrelation of place identity, social space structures and changing social practices in the Armenian rural communities.

Key words: *place identity, place attachment, rural community, social space, space structure, social practice*